

ԳՐԻԳՈՐԸ ՆԱԶԻԱՆՋՈՒԹ ԵՒ ՍԵԼԵՒԿԻԱՅՈՒԹ.

V.

(Շարունակում):

Բացի այս բոլորից Գրիգորին վիճակուած էր իւր կեանքի մէջ այլ անախորժութիւններ էլ կրել: Երբ Յուլիանոսը գնաց պարսից գէմ պատերազմի Գրիգորի կեսարիոս եղբայրը վերադարձաւ հայրենիք: Երբ կեսարիոսը նորից իւր պաշտօնատեղին գնաց, Յուլիանոսի մահից յետոյ Յուլիանոսից և Վաղէսից էլ յարգանքով ընդունուեց և վերջինից կարգուեց Բիւթանիայի կայսերական գանձապահ: Նա պէտք է Նիկիայում ապրէր, բայց այդ քաղաքը 362 թուի երկրաշարժից սաստիկ ամայացաւ և հազիւ ազատուեց կեսարիոսը կորցնելով իւր կարողութեան մեծ մասը: Այս բանում Աստուծոյ աջի այցելութիւնը տեսնելով՝ նա թողեց աշխարհային բոլոր նախագծերը, և վերադարձաւ Նազիանզ վերջնականապէս այնտեղ բնակելու համար: Այստեղ նա մկրտուեց և կարճատեւ հիւանդութիւնից յետոյ 369 թուին վախճանուեց կտակի տեղ թողնելով հետեւեալ բառերը («որոնց արժէ ոսկի տառերով գծագրել»): «Ես ցանկանում եմ՝ որ բոլոր կարողութիւնս բաշխուած լինի աղքատներին»: Նորա մահը նորան անկեղծօրէն սիրող Գրիգորին, որ այնուհետեւ և՛ որպէս կտակակատար պէտք է անախորժութիւնների հանդիպէր, մեծ վիշտ պատճառեց: Այս ժամանակը ընդհանուր անկարգութիւնների շրջան էր և կեսարիոսի թշնամի հզօր մարզիկ ինչ որ կարողացան՝ յափշտակեցին նորա սեպհականութիւնից: Գրիգորը, որին վիճակուած էր միայնակ վերականգնել իւր մեռած եղբօր իրաւունքները, հարկ համարեց գրել Կոստանդնուպօլսոյ Սուրբոնիոս քաղաքապետին՝ խնդրելով նորա պաշտպանութիւնը:

Կեսարիոսը թաղուեց նահատակների շիրիմների մօտ և Նոննան ուղեկցում էր նորա թաղման թափօրին ոչ թէ սգաղգեստ, այլ հանդիտական սպիտակ հագուստով, որպէս մի կին, որ գիտէր թէ

քրիստոնէի համար մահը ոչ թէ նախատինք՝ այլ պսակ է բերում: Իւր եղբոր դագաղի վերայ Գրիգորը խօսեց իւր «եօթներորդ ճառը», որ ներկայացնում է եղբոր ծառայութիւններէ մասին ներքոյեան դամբանականի վսեմ օրինակը, եղբոր, որի յիշատակին նա տասն և վեց հատ ջով ջով տապանագրեր (էպիտաֆիա) նուիրեց:

Այնուհետեւ այս նշանաւոր ընտանիքի շուտով մեռաւ նորա և մի այլ անդամը, որ էր Գրիգորի Գորգոնիա քոյրը. սորա դագաղի վերայ ասաց նա իւր «ութերորդ ճառը»: Հանգուցեալը իւր մէջ միացնում էր բարեգործ կնոջ և մօր գործունէութիւնները՝ անձնուէր քրիստոնէի բարեգործութիւնների հետ: Գորգոնիան մի իկօնիայի քաղաքացու հետ ամուսնանալով՝ ունեցաւ հինգ զաւակ և, ամուսնացած կնոջ այնպիսի գեղեցիկ օրինակ էր, որպիսին էր կուսութեան համար Բարսեղի Մաքրինա քոյրը: Նորա գլխաւոր նպատակն էր իւր որդիքն ու թոռները Աստուծոյ համար դատտիարակել: Նա (ինչպէս իւր եղբայրն է վկայում) չէր պըճնուում ոսկուով, նրբաթել անկուածներով կամ թանկագին քարերով. զգուշանում էր հտպոտանքից, ձօխ կեղծ ծամ չէր գործածում, և իւր գլուխը չէր գեղեցկացնում արուեստական գանգուրների խոպոպիքներով, այլ ճնշելով իրան՝ համեստաբար ապրում էր աղօթքով և բարեգործութիւններով: Իւր մահից սակաւ ինչ առաջ էր մկրտուել: Երազում ազդումն ստացած լինելով իւր մահուան ժամանակի համար, իւր հոգեւորքի ժամանակ ժողովեց իւր շուրջը արիւնակիցներին, տուեց նոցա իւր հրաժեշտի ողջոյնը և հանգեաւ: Մինչև անգամ երբ նա այլ ևս չէր շնչում, նորա շրթունքը դեռ էլի շարժւում էին և ուշադրութեամբ ունկնդրողը կարող էր լսել սաղմոսի խօսքերը, «խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեսցուք» (Սաղմ. Գ. 9):

Բայց և այնպէս այսպիսի թանկագին կորուստները չը վհատեցրին Գրիգորին իւր հովուական պարտքը կատարելիս: Նոյն ժամանակին տեսնում ենք նորան Գոարիդայի համար Եւլալիոսի եպիսկոպոսական ձեռնադրութեանը մասնակցելիս: Գոարիդայի բնակիչները հերետիկոսութեան սարսափներից ազատուելու համար

ցանկանում էին նորա եպիսկոպոսանալը: Կեսարիայի մօտ հիւանդների և բորոտների համար Բարսեղի շինած հիւանդանոցի բացման հանդիսին խօսած քարոզի մէջ Գրիգորը դէպի թշուառները հոգածութեան պարտք է ներշնչում քրիստոնեաների մէջ: Երբորդ քարոզում (373 թուին) նա իւր հայրենակիցներին դիպած աղէտների ժամանակ (այսինքն անասունների ժանտամահի և ամայացուցիչ կարկտախառն փոթորկի ժամանակ) իւր սեպհական ժողովրդակիցներին մխիթարելու և յանձանձելու համար արեց այն ամենը՝ ինչ որ կարող էր: Նա իւր աստիճանովը օգտւում էր որպէս ժողովրդական իրաւունքները պաշտպանող երեսփոխան (տրիբուն): Նազխանդի բնակիչները կայսերական մի հարստահարութիւնից յուսահատած՝ 373 թուին ըմբոստացան և նահանգապետը սպառնացաւ նոցա քաղաքը գիւղի աստիճանի ստորացնել, մինչև անգամ հիմնայատակ անել: Քաղաքացիք իրանց եպիսկոպոսի միջնորդութեանը ապաւինեցին և նա մի փառաւոր ճառով նահանգապետից գթութիւն խնդրեց ու միևնոյն ժամանակ մխիթարական և յուսադրող խօսքերով քաջալերեց տրտնջացող ժողովրդին: Այն ժամանակի եպիսկոպոսները յիրաւի երևում էին իրանց փայլով ու արժանաւորութեամբ, երբ օգտուելով իրանց հոգևոր առանձնաշնորհութիւններով, միջնորդի դեր էին վարում կատաղի կառաւարիչների առաջ նոյա անբաղդ հպատակների համար:

Աւագ-Գրիգորի եպիսկոպոսական ամբիժ պաշտօնավարութեան քառասուն և հինգ ամեակը հետևեալ տարին լրանում էր: Նա համարեա հարիւր տարեկան էր և վախճանուեց՝ ինչպէս վայել է մի ճշմարիտ հովուի ազօթելիս՝ ծունր խոնարհած: Նորա վերաց դամբանականը ասաց նորա որդին Բարսեղի ներկայութեամբ, այն ութանկիւն եկեղեցում՝ որ հանգուցեալն ինքն էր կառուցել (որ յունական բազիլիկների պէս վերեւից էր լուսաւորւում և տանիքը զարդարուած էր մարդաչափ արձաններով): Ասկաւիկ մի յետոյ մեռաւ և Գրիգորի մայրը—Նոննան, և նա աշխարհիս մէջ մնաց մէն մեռակ: Թէև Նոննան օրերն անցրած զառամեալ էր, բայց նորա աչքերը դեռ չէին վատացել և ուժերը դեռ չէին սպառուել: Գնաց

իւր ամուսնու և որդու սպասաւորած եկեղեցին. և սուրբ սեղանի առաջին խոնարհութեամբ յանկարծ, առանց ունէ նախընթաց հիւանդութեան, առաւ մահուան հրաւերը: Նա իսկոյն մի ձեռով զգուշութեամբ բռնեց սեղանից և միւս ձեռը վեր բարձրացնելով՝ աղօթեց. «Տէր Զիսուս, ողորմիր ինձ» և այնուհետև խաղաղութեամբ վախճանուեց: Նորա որդին, որ իւր հօր մահուան դամբանականի մէջ նորա մասին արդէն շատ բան ասել էր, այս անգամ քարոզ չասաց, այլ իւր մօր յիշատակին նուիրեց մի քանի փոքրիկ Վիպերգութիւններ (պօէմա):

Եպիսկոպոսական թափուր գահի համար Գրիգորը թէև ձեականապէս չընտրուեց, որովհետև նա վճռականապէս մերժեց այդպիսի ընտրութիւնը, բայց մինչև մի որոշեալ ժամանակ ստիպուած պարտքի զգացմունքից՝ վարեց իւր հօր գործը, իսկ 375 թուին նա այնպէս ծանր հիւանդացաւ, որ մինչև մահուան զուրը հասաւ, և նորա բարեկամ Սամոսատի Եւսեբիոս եպիսկոպոսը, յոյս չունենալով որ նորան կենդանի էլ կը տեսնի՝ մի քանի անգամ այցելեց նորան՝ երբ նա հիւանդութեան մահճումն էր: Գրիգորի ամուր և մաքուր կազմուածքը գիմացաւ հիւանդութեանը և նա առողջանալուց յետոյ Սիլվեկիայի Խաւրիա քաղաքը գնաց, որի մասին սիրում էր մտածել որպէս Ս. Թէոփիլի բնակալացիի վերայ: Նա դեռ հիւանդութիւնից կազդուրուած չէր և երեք տարի տառապեց այնտեղ առանձնութեան մէջ: Այստեղ առաւ իւր բարեկամ Բարսեղի մահուան (379 թ.) գոյժը: Այս գոյժը նոցա բարեկամութեան մէջ պատահած յայտնի գժտութեան պատճառով աւելի ևս վշտառիթ եղաւ: Երկու տարի անցած՝ նա Բարսեղի յիշատակին խօսեց մէկը իւր գեղեցկագոյն ճառերից, որով աւագուցեց թէ վերջապէս քրիստոնէական մեծահոգութիւնը իւր մէջ յաղթանակել է, և թէ, Բարսեղի կողմից դէպի ինքն գործուած սխալ քայլը մոռացութեան է տրուել:

Գրիգորը ընդհանրապէս ի բնէ նկուն և տխուր արամազրութեան մարդ էր, բայց կեանքը նորա համար երբէք այնպէս մուսլ չէր երևացել, ինչպէս իսկապէս այս վայրկեանին: Նա իւր բարեկամ հօտոր Եւդոքսիոսին գրեց իւր ամենատխուր նամակներից

մէկը՝ որպիսին երբ և իցէ կարող էր գրուած լինել մարդկային ձեռքով: Վա՛մ դրութեան մասին ես հարցնում, գրում է նա: Դրութիւնս կատարեալ թախծութիւն է: Ես Բարսեղին եմ կերցրել, Կեսարիոսին եմ կորցրել, իմ հոգեւոր և իմ մարմնաւոր եղբօրս, և Դաւթի տէս կարող եմ ասել. «Հայր իմ և մայր իմ թողին զիս» (Սաղմ. ԻԶ. 10): Հիւանդստ եմ, ծերութիւնը արդէն գլխիս վերայ բոյն է դրել: Հոգսերս բարդ և գործերս խճճուած են. բարեկամներս անհաւատարիմ են, եկեղեցին՝ առանց հօսիւնների: Կորչում է այն ամենը՝ ինչ որ յարգելի է. յայտ յանդիման շահատակում է չարիքը: Մենք խաւարի մէջ ենք թարթափում, իսկ ռահացոյց ջահը (փարոս) ոչ մի տեղ չէ երևում: Քրիստոսը ննջում է ¹⁾ ինչ կը լինինք մենք: Այս թշուառութիւններից միակ ելքը մահն է: Եթէ կատարուած իրողութիւնների համեմատ դատենք, ես սարսափում եմ մտածել թէ գերեզմանից յետոյ ինչ կը լինի:

Հաւանական է, որ մարդկային բնութեան մասին նորա սքանչելի վիպերգութիւններից (սօսմա) մէկը վերաբերում է հիւանդութեան և վշտերի այս շրջանին: «Երեկոյեանը, նուագում է նա իւր վիպերգութեան մէջ, վշտերովս ճնշուած՝ նստել էի ստուերախիտ անտառակի մէջ. հեռի՛ բոլորից, լքած սրտով: Այո՛, գժբաղգութիւններս ամբելու համար սիրում եմ հոգուս հետ դուրսը: Երգեցիկ թռչունները ճռուողում են և թեթեւ հողմիկի հետ ճիւղերից գգուանք են զեղանում սրտիս մէջ, որքան և սիրտս վհատած լինէր, քաղցրահնչիւն, արևի սիրահար, երգող արտուտիկները իրանց զուարթ գայլայլիկներով հնչեցնում էին ամբողջ անտառակը: Անտառակը ոռոգող սլաղ առուակը նոյն անտառի միջով, ոտներիս մօտից խփտջում էր, իսկ ես խորասուզվում էի ծանր վշտերիս մէջ բոլորանուէր: Դոցա գեղեցկութիւնը իմ համար չէր, վշտերով ընդարմացած հոգիս վայելք չէր զգում, և ես՝ հոգիս վրդափող մրրկից ընկճուած՝ անձնատուր էի լինում մութերի

1) Աւետարանի այն հատուածն է յիշեցնում, երբ աշակերտները Յիսուսի հետ նաւի մէջ էին. նաւը ալեկոծվում էր, աշակերտները յուսահատ էին, իսկ Յիսուս քնած էր նաւի մէջ մի անկիւնում: Հայ թարգ.

և բառերի միմեանց հակասող զառանցանքին: Ի՞նչ էի. այժմ ու
եմ. յետոյ ինչ կը լինեմ: Այդ ամենը ինձ պարզ յայտնի չէ և
ինձանից իմաստնագոյնն անգամ չը գիտէ այդ: Բայց ես աղջա-
միղջով պարուրուած՝ գեղեւում եմ՝ չունենալով ինչ՝ որին երազում
գտնէ ցանկայի: Սրտագին յուզուած բանաստեղծը նոյն ոճը շա-
րունակում է. և այնուհետև ինքն իրան ընդդիմաբանելով՝ բացա-
կանչում. «բայց ինձ ո՞ւր պէտք է տանես, ո՞վ չարախորհուրդ
հոգս:— Կայ: Աշխարհիս մէջ ամեն բան Աստուծուց ստոր է: Խեղքի
եկ: Ապաքէն Աստուած ինձ զուր չէ ստեղծել: Ես իմ այս երգից
հրաժարվում եմ, այդ իմ փոքրոգութեան պտուղն է: Թող այժմ
խաւար լինի. բայց այնուամենայնիւ կը բացուի ճշմարտութեան
լոյսը. և դու ամենին էլ խելամուտ կը լինես, կամ Աստուծուց
լուսաւորուելով՝ կամ հրայրեաց լինելով: Այսպէս երգելով՝ մեղ-
մանում էին վշտերս և ես ստուերախիտ անտառից առն էի վե-
րադառնում երբեմն դանդաչանքիս վերայ ծիծաղելով, երբեմն
էլ հակասող մտքերի մէջ զառածելով և սրտիս միջի վիշաք բոր-
բոքելով:»

Գրիգորը անկասկած ենթադրում էր թէ այս կեանքում բացի
խտամբեր մենակեցութիւնից, վշտառիթ յիշողութիւններից և
յարատեւ հոգածութեան մոմսութիւց էլ ոչինչ սպասելիք չունի:
Բայց նախախնամութիւնը նորա համար այլ բան էր պատրաստել,
և նորա կեանքի համար ամենագործունեաց և լուրջ ժամանակը
պէտք է սկսուէր, թէև վիճակուած էր այդ կեանքը սահմանա-
փակուած լինել միայն երեք արժանայիշատակ տարիներով:

(Շարունակելի)

Թարգմ. Յ. Վ. Մ.